

-7, 19-23), եթէ ոչ պարարտացնելու անոնց սեղանն ու քիմքը: — Այս ճաշերուն կ'ընկերէին ինչ ինչ արարողութիւնք եւս, որոց նկարագիրը կը պահեմ կոչնոց, որպէս զի ամբողջութեամբ տեսնենք հոն, եւ խուսափենք կրկնութենէ:

Այլուր ակնարկեցինք մեր երկրին բարեբերութեան, հռչակեալ օտարաց մէջ անգամ (աստ, 14): Բայց Հայաստան անշուշտ միայն ազատին չէր ժպտեր. այլ անոր համբարները լեցնող վաստակասէր մշակին եւս կը շնորհէր՝ «կանամբք, արամբք եւ ընտանեօք՝ զանպակասութիւն հացի եւ գինւոյ» (Փրպ. 23), եւ նա իւր չափաւոր տան մէջ ալ իւր քրտանց արդեամբք կը հանդերձէր իրեն բարեբիկ սեղան մը: Այս բաւական չէ. նաեւ Այրարատոյ «գետոցն գնացք՝ բազմակերպ ձրկամբք մեծամեծօք եւ փոքումբք» կը ծառայէին նախ «յագուրդ որովայնից ժրացելոցն եւ անվեհեր ջանացողացն» (նոյն, 25): Կարնոյ մօրերուն մէջ եւս կային «անբաւութիւնք ձկանց եւ զանազան հառոց ճարակաւորաց, յորոց ի ձռոց միայն կերակրեալ լինէին բնակիչքն», կ'ըսէ պատմիչը. թող դաշտաց մէջ սփռած «զթանձրութիւն խոտոց եւ զքաջաբերութիւն սերմանաւոր պտղոց» (Խոր. 256): Բազրա-